

Հ Տ Դ 941 (479. 243)  
Գ Մ Դ 63. 3 (25) 43  
Ա - Բ 706

Գրականագիտություն

**Զինաիդա Բալայան**  
դոցենտ, ք. գ. թ., ԱրՊՀ, գրականության եւ լրագրության ամբիոն  
E-mail: zinaida\_araqelyan@mail.ru

**XIX ԴԱՐԻ ՎԻՊԱԿԱՆ ԱՐՅԱՆԸ.  
ՐԱՅՆՈՒ «ՆԱՄՄԱՅԻ ՄԵԼԻԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԳԻՐՔԸ**

Աշխատության պատմական ժամանակաշրջանն ընդգրկում է XVIII-XIX դդ. Նամսայի մելիքություններում քաղաքական կյանքի, տարածաշրջանում՝ պատմաաշխարհագրական լանդշաֆտում, քաղաքական իրավիճակին տիրապետել գանկագող հարեւան երկրների երկդիմի խաղերի, արտաքին եւ ներքին հարաբերությունների, ինքնիշխանության կորստի սուր պատկերը, ապա ռուսական կայսրության ենթակայության տակ հայտնված արցախահայության ազատագրական պայքարը պարսից տիրապետության դեմ, քաղաքական դիրքորոշումները, հուսախաբություններն ու կորուստները, լուսավորչական-կրթական շարժումը, Անդրկովկասում Շուշիի՝ «արվեստների օազիսի» լուսավորության կենտրոն հանդիսանալը՝ ներկայացնելով Արցախում ծավալված ազատասիրական կյանքի հարուստ նկարագիրը:

Բանալի բառեր. Արցախ, գրականություն Արցախի մասին, Նամսայի մելիքությունները, ազգային, Րաֆֆի, XVIII-XIX դարեր, քաղաքական դիրքորոշումները, հուսախաբություններն ու կորուստները:

**Зинаида Балаян,**  
к.ф.н., АрГУ, доц. каф. литературы и журналистики,  
E-mail: zinaida\_araqelyan@mail.ru

**“ЭПИЧЕСКИЙ АРЦАХ 19-ГО ВЕКА: КНИГА РАФФИ “МЕЛИКСТВА ХАМСЫ”**

Работа охватывает историческую эпоху, которая включает в себя политическую жизнь Меликств Хамсы 18-19 веков, двойные игры соседних стран, которые хотят завладеть политической ситуацией региона, внешние и внутренние взаимоотношения острую картину самоуправления, а так же освободительное движение арцахства, находящегося под русским правлением, против персидского ига, политические ориентации, потери и надежды, культурно-просветительское движение, Шуши как “оазиса искусств” в Закавказье, представляя картину культуры, литературной богатой жизни Арцаха.

Ключевые слова: Арцах, литература об Арцахе, Меликств Хамсы, национальный, Раффи, 18-19 вв, политические ориентации, потери и надежды.

**Zinaida Balayan,**  
ASU, PhD in Philology, Associate Professor  
E-mail: zinaida\_araqelyan@mail.ru

**EPIC ARTSAKH OF 19TH CENTURY: «KHAMSA MELIKDOMS» BY RAFFI**

The study covers the political life of Khamsa Melikdoms, the relations of Artsakh with neighboring states, its internal situation, loss of self-government, struggle against Persians and unification with Russia, political stance, educational movement, cultural and literary activity in the 18-19th centuries.

The study was carried out by the application of comparative, synthetic, hermeneutic, axiological and structural methods. The analysis focused on typological method that helped to disclose the characteristics of literature, education, history and culture.

Key words: Artsakh, Artsakh literature, Khamsa Melikdoms, national, Raffi, political orientation, educational movement, 18-19th centuries.

Րաֆֆու «Նամսայի մելիքություններում» կատարված բնութագրումները բնորոշում են մարդկային հատկանիշները, հուշում, թե որտեղից է գալիս մելիքությունների պատմության էթնիկական տրվածքը՝ անմիաբանությունը, դրա հետեւանքով ծիլ տված արյունալի բախումները:

«Նամսայի մելիքությունների» շարադրանքում այս երեւույթը առկա է դառնում թե՛ Մելիք Շահնազար II-ի, թե՛ Ռուստամի ու այլ անմիաբանների տիպական գծերում:

Մելիք Միրզա խանը եւ նրա ժառանգները (մելիք Ալլահվերդին (շփոթելի Հասան Ջալալյան մելիք Ալլահվերդու հետ), եւ Մելիք Ղահրամանը պատմական կերպարներ են: Րաֆֆին, բնութագրելով հերոսներին, նրանց ներկայացնում է նաեւ վիպական շղարշներով՝ հետեւելով ավանդություններին: Անշուշտ, Ժողովուրդը նրանց մասին հետաքրքիր պատմություններ է ստեղծել՝ յուրաքանչյուրին որակելով ըստ արժանիքների: Օրինակ՝ անմիաբան Մելիք Ղահրամանը, մատնությունաբե խաչենի Հասան Ջալալյան իշխանին՝ քաջ ու անպարտելի մելիք Ալլահվերդուն իբր խորհրդի իր տուն՝ Լնծրիստան կանչելով կալանավորեց եւ ուղարկեց Փանահ խանին: Վերջինս դահիճներին հրամայեց գլխատել իշխանին, կոտորել նրա ընտանիքը, իսկ արդյունքում Շահնազարը իր եղբայրասպան արյունոտ ձեռքերը թաթախեց եղբոր որդու՝ Սայի բեկի արյան մեջ՝ վախենալով, որ վերջինս կլուծի հոր՝ մելիք Հովսեփի արյան վրեժը: Փանահը, իր տված խոստումի համաձայն, մատնիչ

Այլահվերդուն հանձնեց Խաչենի մելիքությունը. այս կերպ Փանահի դաշնակիցներ դարձան Վարանդայի եւ Խաչենի մելիքները:

Անշուշտ, Ռաֆֆուն այս հարցերի շարադրմանը օգնել է նաեւ Պլ. Չուբովի «Ղարաբաղի աստղագետի» վիպական պատմմաների հետաքրքիր շարքը, հերոսների վարքը, մելիքների առջեւ ծառացած ոչ միայն կենսական, այլեւ քաղաքական, իրավական ու այլ կարգի բարդ խնդիրները, որոնք փորձել են հաղթահարել: Ռաֆֆին դրանք պատմագրական ուղղվածությամբ ու հիմնարար քննությամբ է ներկայացրել «Խամսայի մելիքություններում»:

Նույնատիպ երանգների գեղարվեստական մարմնացումներով է կերպավորված պետական հանցագործ հռչակված ցառչի Փանահի կերպարը՝ տրված տիպական հանգուցալուծումներով՝ րաֆֆիական արվեստի վարպետությամբ:

Փափուկ դիվանագիտության, խորամանկության մարմնացում, պարսկական բարքերը ընդօրինակված, պարսկական կառավարությունից փախած Փանահը, իր կայացման սկզբնական շրջանում փորձելով բերդեր (Բայաթ, Ասկերան) կառուցել՝ պատժվելով հայ մելիքներից, փոխեց գործելու տակտիկան եւ ստրատեգիան՝ սպասելով գործելու հարմար ու ձեռնտու պահի, որը շատ չուշացավ:

Խաչենիությամբ մելիք Ծահնագարից վերցնելով Շուշին, անառիկ բերդ «հիմնելով»՝ փորձեց նաեւ անմիաբանության, խարդախության գործնով Խամսայի մելիքներին իրար դեմ լարել, նրանց ջլատել, մելիքների միաբանությունը քանդելու «առաքելությամբ»՝ Մելիք Ծահնագարի հետ դարձավ Ղարաբաղի գերեզմանափորը: Ինչպես տեսանք, նաեւ դեպքերի բերումով, իր կողմը գրավելով Վարանդայի եւ Խաչենի մելիքներին, ամրապնդեց իր դիրքերը:

Որքան էլ Փանահը իր դաշնակիցների հետ փորձում էր Ղարաբաղում դրության տեր դառնալ, նրան չէր հաջողվում, պատժվում էր Գյուլիստանի մելիք Յուսուբի, Ջրաբերդի մելիք Աթամի, Դիզակի մելիք Եսայու գորքերից: Փանահի անկարողությունը ցույց տալու համար Ռաֆֆին ներկայացնում է ժողովրդի մեջ պատմվող մի **առակ**, որը լույս է սփռում Ղարաբաղի կյանքի սովորոտ կողմերի վրա. «Մինչև այսօր **առակ** է դարձել Ղարաբաղի ժողովրդի մեջ,- գրում է Ռաֆֆին,- թե Թյուրի-Արզումանը, դալի Մահրասան և Չալաղան-Յուզբաշին ամբողջ յոթն տարի յուր չտվեցին, որ մի թուրք անց կենար Մագն-կամուրջից (Մագն-կամուրջ կոչվում է Գարգար գետի վրա գտնվող կամուրջը Շուշի բերդի մոտ) դեպի Ջրաբերդի և Գյուլիստանի կողմերը»<sup>1</sup> :

Ռաֆֆին վիպական հյուսվածքում գործող ժողովրդական վրիժառու Դալի Մահրասայի (դալի-գիծ.- Ավագ վարդապետ) մականվան մասին նշում է, թե ժողովուրդը չի մոռացել իր հերոսներին, եւ որ արևելքի XV դարի հերոսը՝ Քոր-օղլին եւ նրա խմբի քաջերը կոչվում էին դալիներ (գժեր): Նույն հատկանիշը ժողովուրդը իր սիրած հերոսին՝ Ավագ վարդապետին էր տվել:

Այսպիսով, Դալի-Մահրասան Ղարաբաղի հայոց վիպական գծերով օժտված, անհավանական երևուցող Քոր-օղլին դարձավ:

«Ժողովուրդը գուցե մինչև հավիտյան կիլիշե այն բոլոր հրաշքները,- գրում է Ռաֆֆին,- որ կատարել է նա իր կռիվների մեջ: Երբ նստում էր իր նշանավոր մոխրագույն (բոգ) նժույգի վրա և կայծակի նման նետվում էր դեպի պատերազմի դաշտը, նրա ահարկու, որոտալից ձայնը բավական էր թշնամուն սարսափեցնելու համար»<sup>2</sup> :

Վիպասանի գրչի տակ բացահայտվում են արցալիցի հերոսի կերպարային անհատականացված գծերը, որոնք ներկայացնում են արցախահայության բնավորության լավագույն տիպական հատկանիշները, թշնամիների դեմ գիտակցված, անողոր պայքարը, սրբազան հայրենիքի պահպանումը:

Եկեղեցու մոլեռանդ մասսան չնեղեց գիծ աբեղային իր կատարած արյունահեղությունների համար: Սիմոն կաթողիկոսի աթոռակալության ժամանակ աբեղային տարան Էջմիածին ու բանտարկեցին սառցատան մեջ, որ ապաշխարհի:

Ռաֆֆին նշում է, թե մի օր գիծ աբեղան իր բանտի մեջ լսեց, որ վանքում ինչ-որ աղմուկ եւ իրարանցում է տիրում: Նրա հարցին պատասխանեցին, թե Ջալալի քրդերը թալանեցին վանքի անասունները, գուցե նաեւ կկողոպտեն վանքը:

Դալի Մահրասան խնդրեց, որ իրեն մի ձի եւ մի քանի գնեքեր տան: Նրա խնդիրը բավարարեցին: Ապաշխարհողը, հեծնելով ձի, նետվեց ավազակների հետուից: Մի որոշ ժամանակից հետո աբեղան վերադարձավ՝ իր հետ բերելով Ջալալի քրդերի կողոպտուրը: Վանահայրը ազատ արձակեց աբեղային՝ երդում առնելով, որ այլևս մարդասպանությամբ չի զբաղվի: Պարզ է, որ աբեղան չպահեց խոստումը, քանի որ մեղք չէր համարում իր հայրենիքի թշնամիներին կոտորելը ու շարունակում էր մասնակցել մելիքների մղած բոլոր պատերազմներին: Դրանցից մեկի ժամանակ Գանձակի մոտ՝ լեզգիների հետ պատերազմելու ժամանակ, ահագին կոտորած անելով, գիշերվա մի ժամի փորձեց մի քիչ հանգստանալ՝ նստելով մի քարի: Չորս կողմը սփռված դիակներ էին՝ ընկած աբեղայի հարվածներից: Դեռևս կենդանի լեզգիներից մեկը, գլուխը բարձրացնելով կրակեց եւ սպանեց աբեղային:

Մեծ սուգով քաջի մարմինը ամփոփեցին Գանձակի մայր եկեղեցու գավթում:

Դալի Մահրասայի տոհմից էր մի այլ ժողովրդական վրիժառու-հերոս, մելիք Ռուստամի նիզակակից Տեր Հարությունը:

Ժողովրդական մյուս վրիժառուն՝ Թյուրի Արզումանն էր: Թյուրի՝ թուրքերենում նշանակում է ավազակ: Վերջինս անչափ աներկյուղ էր, աննկարագրելի քաջություն, հրաշքներ գործող: Քարավաններ ու գյուղեր, քաղաքներ էր կողոպտուի ենթարկում՝ օրը գերեզման: Արզումանը մելիք Աթամի հոր՝ մելիք Իսրայելի հովվի որդին էր, մանկական հասակում ոչխարներ էր արածացնում: Երիտասարդության տարիներին դարձավ մելիք Աթամի ընտիր ու հավատարիմ գորավարներից մեկը:

Ժողովուրդը վիպելով իր սիրելի հերոսի մասին, նրան զարմանահարաշ, հերոսական հատկանիշներ է վերագրում:

Ճիմական թշնամիներից մեկը պարսիկների համար դարձել էր Փանահ խանը: Վերջինս ամեն տեսանկյունից պատուհասվել էր Թյուրի Արզումանից: Իրեն հատուկ խորամանկ հնարքով Փանահ խանը Արզումանի հորը՝ Սարգսին, բռնել տվեց եւ իբրեւ պատանդ փակել տվեց Շուշի բերդում: Մի օր Սարգսին հարցաքննելով՝ Փանահը ասում է. «Նրա տիր քո որդուն, որ դադարե չարագործությունից. նա Ղարաբաղի երկիրը ավերակ դարձրեց. Մագն-կամուրջը թողեց կարոտ մարդիկների անցուղիներից: Ես Արզուման անունով որդի չունեմ, պատասխանեց ժերմի հայրը սառնասրտությամբ: Ինչպե՞ս չունես, հարցրեց խանը բարկանալով: Մի՞թե այն արյունաբեր Արզումանը, որ իմ երկրները կողոպտում է, որ իմ շինականների տները հրդեհում է, որը ինձ ամեն օր հանգստություն չէ տալիս, մի՞թե այդ ավազակը քո որդին չէ: Այո՛, իմ

<sup>1</sup> Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, Եժ, տարբ. հատորով, տասներորդ հատոր, Երևան, Հայպետհրատ, 1959 (այսուհետև՝ Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները), էջ 211 :  
<sup>2</sup> Նույն տեղում, էջ 212 :

որդին չէ, պատասխանում է դառնացած ծերունին,- եթե նա իմ որդին լիներ, քեզ մինչև այսօր կենդանի չի պիտի թողներ և քո բերդի ավերակները քո գերեզմանը պիտի դարձներ... »<sup>1</sup>:

Կատաղած խանը հրամայում է գլխատել դառնացած հանդուգն Սարգսին:

Բաֆֆին Իբրահիմին համեմատելով հոր՝ Փանասի հետ, որդուն մահմեդական մոլեռանդության տիպար էր անվանում. «Նա ոչ միայն հալածում էր քրիստոնեությունը, այլ բռնությամբ ստիպում էր շատերին ընդունել մահմեդականություն...»<sup>2</sup>:

Իբրահիմի այդ վարմունքը խիստ կերպով վիրավորում է Արցախի մեկիքների, արցախցիների կրոնական զգացմունքները: Այդ էր պատճառը, որ վերջիններս, այլ հնար չգտնելով, Իբրահիմի ոճրագործության առաջն առնելու, պատահած ժամանակ սպանում էին Քրիստոսի հավատը ուրացողներին:

Դալի Մահրասան երգվել էր, թե չարագործ Իբրահիմը որքան հայ կրոնափոխի, այնքան թուրք է սպանելու: Այլ էր Թյուլի Արզումանի վարմունքն այս հարցում՝ կատարելով միսիոնների դեր, իր ձեռքն ընկած մահմեդականներին ստիպում էր անպայմանորեն խոստովանել քրիստոնեական կրոնի ճշմարտությունը եւ մահմեդականության ստույթունը, այդ ամենը կատարելով՝ սրի օգնությամբ: «Մի դեպք,- գրում է Բաֆֆին,- որ Ղարաբաղի հայերի բերանում **առանկի** ձև է ստացել, արտահայտում է այդ մտքորո (Թյուլի Արզումանի- Ջ. Բ.) կրոնական նախանձախնդրության հատկանիշները: Մի անգամ Արզումանը պատահում է մի բարձրաստիճան թուրք մոլլայի, որը իր ծառաների հետ գնում էր Շուշի բերդը: Բռնում է մոլլային, և իր սուրը նրա պարանոցի վրա դնելով, ասում է. «Եթե կխոստովանվես, որ Քրիստոսն աստված է, ես քեզ չեմ սպանի»: Մոլլան խոստովանվում է: Արզումանը այդ խոստովանությունը երեք անգամ կրկնել է տալիս և ապա բաց է թողնում մոլլային... Խանը... բարկությամբ հարցնում է. «Մի՞թե դու խոստովանվեցար, որ Քրիստոսն աստված է: Այո՞, խոստովանվեցա, պատասխանում է մոլլան:- Իսկ եթե դուք, վեհափառ խան, Արզումանի ձեռքը ընկնեիք, կասեիք, ոչ թե միայն Քրիստոսը աստված է, այլ և դու ինքդ, Արզուման, աստվածների աստվածն ես...»<sup>3</sup>:

Այս առակում երևում է Արցախի, արցախահայության ճակատագրի վտանգված դիմագիծը, հասարակական կյանքի ոչ կայուն՝ որոգայթներով լի քաղաքական նկարագիրը, եւ միաժամանակ արցախցու արիական, աներեր կամքն ու անխորտակելի ուժը, դյուցազնական կերպարը դիտարկելով, ոճրագործ Իբրահիմի ու նրա որդեգրած քաղաքականության, ընդհանրության մեջ՝ բոլոր կարգի թշնամիների հանդեպ:

Թյուլի Արզումանի, Դալի Մահրասայի արիական գործերի մասին պատմվող վիպական կտորները շարունակվում են գրքի շարադրանքի տարբեր էջերում՝ տիպական դառնալով արցախցի հերոսների, մեկիքների՝ հայրենիքի պատիվն ու հարգը, շահերը պաշտպանող հերոսների կատարած քաջագործություններում: Ժողովրդի սիրելի հերոս Թյուլի Արզումանը սպանվում է Գանձակի պաշտպանության ժամանակ:

Խորիմաստ միտք պարունակող «**Տափշտակող կամ առաքատակող հայրուրապետ**» մականուն ունի վիպական բացառիկ հատկանիշներով բնութագրված ժողովրդական մյուս վրիժառուն՝ Չալաղան Յուզբաշին, ով առավելությամբ ավագակապետ էր, ոչ թե գորապետ: Ժողովուրդը չէր հիշում նրա իսկական անունը ու թե ինչպիսի վախճան ունեցավ իր սիրելի հերոսը: Նրան իր արհեստի անունով էին հիշում ժամանակակիցները: Բաֆֆին գրում է, թե Չալաղան Յուզբաշին հանդիսանում էր այն 32 պատգամավորներից մեկը, որոնք անդադար դիմում էին ռուսաց արքունիքին եւ իրենց հայրենիքի փրկության համար օգնություն խնդրում: Քաջարի արցախցին տեսնելով, որ ապարդյուն է քաղաքականությամբ հայրենիքի համար որևէ օգտակար գործ կատարել, սկսում է գործել սրով: Հասկանում է, որ օտարները միմիայն իրենց շահերն ունեն եւ գործում են այդ շահերից ելնելով, անտես անելով հայոց բոլոր կարգի ծառայությունները, նվիրվածությունները, որ օտարների, նույնիսկ հավատակից պետությունների վրա հույս դնելը անիմաստ է ու խաբկանք, քաղաքական միամտություն: Այստեղ շոշափելի է արցախցու քաղաքականապես հասունացումը, ազգային ճակատագրի հարցում ճիշտ կողմնորոշման հասնելը, սթափ որոշում կայացնելը, թեկուզ այդ ամենին հասնելու ճանապարհները խորդուբորդ են, որոգայթներով լի, ամենօրյա դաժան պայքար՝ հագար ու մի ճակատումների դեմ՝ ստեղծված խառնակ ու անբարո ժամանակներում: Ուստի պետք է գործել՝ ելնելով ազգային շահերից, ազգային գաղափարակարգից:

Չալաղան յուզբաշու՝ այդ մեծ հայրենասերի ապրած ամբողջ ավերակները կարծես ներկաներին այսօր էլ հուշում են իրենց մեջ թաղած հուշիկների, ճակատագրական ժամանակների, հերոսական արցախցիների մաքառումների, պայքարի ողիսականը, երեւոյթների խորը առասպելականությունը: Ամբողջ գտնվում է Ջրաբերդ գավառում, Երիցմանկաց վանքի հանդեպ, մի նեղ ձորի մեջ՝ շրջապատված խիտ անտառներով՝ Թրդի գետի ափերի մոտ:

Վիպապատմական կերպավորումներ են Գանձակի խաները՝ Ուղուրյու խանի որդի Շահվերդի խանը, որդին՝ Ջավատ խանը: Նրանք բարեկամաբար էին տրամադրված դեպի Արցախի մեկիքները, ժողովուրդը: Այդ կարևոր գիծը երևում է «Լամասայի մեկիքությունների» համարյա ամբողջ շարադրանքում:

Հայերի, Արցախի մեկիքների կողմից պահպանվող այդ ամուր բարեկամության առաջատար գծում կանգնած էին Ջրաբերդի մեկիք Աթառը, որդին՝ մեկիք Մեջլումը, Գյուլիստանի մեկիք Յուսուֆը, մայրը՝ քրիստոնեություն ընդունած իմաստուն Դամար Սուլթանը՝ Գանձակի Շահվերդի խանի եղբոր աղջիկը: Բաֆֆին լավագույնս է ներկայացնում այդ կարևոր օղակը, ի տարբերություն մեկիքներին հաճախակի դավաճանող, բանասարկող վրաց իշխանավորների:

«Շահվերդի-խանը,- գրում է Բաֆֆին,- բարեսիրտ մարդ էր, որպես առհասարակ եղել են Գանձակի խաները: Նա ծագումով թուրք չէր, այլ պարսիկ էր. պարսիկները համեմատաբար ավելի բարի են եղել դեպի քրիստոնյաները, քան թե վայրենի, մանգոլական թուրքերը: Իր սահմանակից և հեռավոր խաների մեջ (որպես էին Շաքիի, Շիրվանի, Շուշիի, Դերբենդի, Բաքվի և այլ խաները) Շահվերդի-խանը ավելի բարձր դիրք ուներ և ձայն. նա պարսից կառավարությունից ճանաչված էր որպես բեզլեր-բեզի, այսինքն՝ իշխանների իշխան»<sup>4</sup>:

Խորամանկության, անհավատարմության, մատուռության, գոռոգության, ազգային հեղինակող տիպական գծերով են կերպավորված վրացի բարձր դասը, արքաները՝ Թեյմուրազը, Հերակը:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 214 :  
<sup>2</sup> Նույն տեղում, էջ 253 :  
<sup>3</sup> Նույն տեղում, էջ 253 :  
<sup>4</sup> Նույն տեղում, էջ 21 8-219 :

Ինչպես ժամանակին ուխտադրուծ Ֆայթալի խանը, նույնպես ընչաքաղց Թեյմուրազը դրժում է Արցախի մելիքների, մելիք Յուսուֆի հետ կնքած պայմանը՝ հաղթված Փանահին, Մելիք Ծահնագարին, մելիք Միրզա խանին տալ իրենց ձեռքը, եւ իր տիպական կերպարային գծերի համաձայն՝ Փանահից եւ անմիաբան մելիքներից փրկագին շորթելով բաց է թողնում:

Այդպիսով, հայոց մելիքների ամենագլխավոր ցանկությունը՝ համատեղ կռիվների ընթացքում գերել ու պատժել Փանահին եւ դավաճան մելիքներին, դժբախտաբար մնում է անկատար: Ժողովուրդը հոգնել էր 20 (քսան) տարի անընդմեջ ընթացող կռիվներից:

Ծահվերդի խանի միջնորդությամբ քանանայա պատերազմներից հետո հաշտություն կայացավ մելիք Աթամի, մելիք Յուսուֆի եւ Փանահի միջև: Վերջինիս պարտավորեցրին չխառնվել մելիքների գործերին:

Փանահը իր խոստումը պահպանեց մինչև վերջ: Որդին, որի բնավորության գծերը, ռիսկալիության զգվելի շերտերը կգերազանցեին նույնիսկ անչափ վտանգավոր հրեշներին, սատանային, մի առ ժամանակից հետո խորամուխ եղավ մելիքների կյանքի ցանկացած հարցերի մեջ, ըստ **առածի**<sup>1</sup> չարության մեջ գերազանցելով բոլոր մահկանացուներին, ռիսկալիության մեջ՝ ներքին եւր ցուցադրելով այլանդակի, բազմադեմ քաղաքական ոճրագործի տիպական գծերում:

Հնրոսական գծերով օժտված կերպավորում է Դիզակի մելիք Եսային: Ըստ Բաֆֆու՝ նա կարդացած մարդ էր. բավական հմտություններ ուներ տարբեր բնագավառներում, մանավանդ իմաստնացած էր հայոց, պարսից ու արաբական դպրությունների մեջ: Անչափ հայրենասեր է, քաջարի, հայրենական սրբություններն ու ավանդությունները պահպանող: Նրա ներաշխարհը ներքին մարդու զարգացման հզոր արքայակցիա է արձանագրում, դառնում էթիկայի ու հայրենասիրության բարոմետր:

Մելիք Եսայու Մոնա անունով դուստրը Մելիք Ծահնագարի կինն էր: Մելիք Ծահնագարից եւ Մոնայից ծնված գեղեցիկ Հուրիգադին հայրը կնության է տալիս Իբրահիմ խանին՝ կատարելով եւս մի ամոթալի գործ, փորձելով իր բարեկամությունը Փանահի որդու՝ Իբրահիմի հետ շարունակական տեսնել:

Այդ քստմունքի արարքը երկար ժամանակ նոր արյունալի կռիվների պատճառ հանդիսացավ մելիք Եսայու եւ Մելիք Ծահնագարի ու նրա դաշնակիցների միջև: Դեպի Տող կատարված հարձակումներից մեկի ժամանակ մելիք Եսային գերեց դավաճան ու անմիաբան մելիք Միրզա խանին: Հին ավանդության համաձայն, մելիք Եսային սուրը բռնելով ողորմելի դավաճանի գլխին ասաց. «Դե՛մ, Միրզա-խան, շատ նման ես այն դավաճանին, որին կոչում էին Մեհրուժան: Նա ուրացավ մեր կրոնը, նա պարսից ձեռքում գործիք եղավ և սկսեց մեր հայրենիքը ավերակ դարձնել: Նրան, որպես վարձատրություն իր կատարած չարագործությունների համար, խոստացել էին Հայաստանի թագու... Հայոց գորավարներից Սմբատ Բագրատունին, կրակի մեջ շիկացած շամփուրին պսակի ձեւ տվեց, և դնելով նրա գագաթի վրա, ասաց. «Դու ցանկանում էիր հայոց թագավոր լինել, ահա՛ ես, իբրև սապետ և թագակիր, պսակում եմ քեզ...»: Բայց դու,- շարունակում է իր ցատումնալից խոսքը մելիք Եսային,- գոնե Մեհրուժանի չափ փառասիրություն չունեիր. դու միայն մի ցած դավաճան էիր, որ ատորյա չնչին փառքի համար թուրք խանի և Մելիք Ծահնագար չարագործի արբանյակը դարձար: Բեզ հետ պետք է վարվել ինչպես մի կատաղած շան հետ, որին սպանում են, որպեսզի մյուս արարածները նրա կծոտելուց չվարակվեն... »<sup>1</sup>:

Մելիք Եսային գայրույթով ի սուրը իջեցրեց Միրզա խանի գլխին (1735 թ.): Ինչպես տեսանք, գեղեցիկ Հուրիգադն էր մելիքների միջև ծագած արյունալի կռիվների պատճառը:

Իբրահիմ խանը խաչենի նոր կառավարիչ է նշանակում սպանված Միրզա խանի որդուն՝ մելիք Ալլահվերդուն: Երեք դաշնակիցները՝ Իբրահիմը, մելիք Ալլահվերդին եւ Մելիք Ծահնագարը, պատերազմի են ելնում Դիզակի մելիք Եսայու դեմ՝ պաշարելով Տող բերդը (1781թ.):

Մելիք Եսային արդեն զրկված էր իր հզոր դաշնակիցներից. Գյուլիստանի Մելիք Բեգլարյան մելիք Յուսուֆը վախճանվել է 1775 թ., իսկ Ֆրաբերդի մելիք Իսրայելյան մելիք Աթամը՝ Իբրահիմի սարսափը՝ 1780թ.: Տողի պաշարումը երկար է տևում:

Մելիք Եսային քաջությամբ պաշտպանվում է հակառակորդներից: Բաֆֆին այդ բոլոր վիպապատումները ներկայացնում է հետաքրքիր շարադրանքով: Այդ հետաքրքիր անդրադարձների նյութը Բաֆֆին քաղել է մի գրչագիր վիպապատումից:

Իբրահիմը մելիք Ծահնագարի խորհրդով մելիք Եսայու մոտ է ուղարկում մի քահանա եւ մի հայ մարդ՝ երդումով, խաչով, Ավետարանով, որ Մելիքը ցած իջնի պաշարված բերդից՝ հաշտվելու համար:

Ինչպես Սմբատ Բագրատունի արքան (նենգ Յուսուֆ ոստիկանը խաբեությամբ Սմբատ արքային հանցեց բերդից՝ խոստանալով դադարեցնել բերդի պաշարումը եւ ժողովրդի նախճիրը, ապահովելով անձի ապահովությունը՝ հրավիրեց բանակցելու: Հանուն իր ժողովրդի փրկության՝ Հայոց արքան դուրս եկավ բերդից, սակայն Յուսուֆ ոստիկանը դրժելով երդումը՝ 913 թ. նրան տանջամահ արեց), նույնպես քաջարի մելիք Եսային դուրս եկավ Տող բերդից՝ հաշտվելու համար իր թշնամիների հետ: Իբրահիմ խանը, ըստ գրչագիր վիպաշարադրանքի, տմարդորեն դրժելով երդումը, մելիք Եսայուն Շուշիի բանտի մեջ խնդրել տվեց, բարբարոսաբար նրա ամբողջ ունեցվածքը յուրացրեց, ամբողջ ավերակ դարձրեց:

Մելիք Եսային ոչ միայն դարասեր էր, այլև մեծ հայրենասեր, քաջարի զինվորական, ազգային ավանդների շարունակող: Տողի բերդի եկեղեցու գավթում ամփոփված նրա գերեզմանի տապանագիրը հետևյալ արձանագրությունն ունի. «Այս է տապան քաջ իշխանին, Սայի անուն մեծ մելիքին. կարգեալ իշխան Նադիր-շահին. երեսուն երեք ամ տիրեաց Տիգակ երկրին. գրաջութին և զհաղթութին՝ արար բագում ձեռնաբ նորին: Ընդ անօրինաց էր հակառակ. ի սուր մաշեր զթշնամին: Ինքն պարզ և գորավոր, քան զառաջինսն էր ահավոր: Մինչ վաթսուն և վեց ամաց եղեալ, ի յաշխարհե վերափոխեալ:

Վախճանվեցավ թիվին ՌՄԼ (1781) »<sup>2</sup>:

Բաֆֆին շարադրելով «ժամանայի մելիքությունները»՝ պատմական նյութին զուգահեռ ներկայացնում է նաև գեղարվեստական անդրադարձներ, վիպական հյուսվածքներ, որովհետև Արցախի մելիքների պատմությունն իր վրա կրել է ժամանակի նկարագիրը՝ իր բոլոր շերտերով: Արցախահայության ճակատագիրը մելիքների պատմության շղթայված մի պարույրն է ու անբավտելի էջը: Գիրքը ներկայացնում է ինքն մելիքների թե՛ աշխարհագրագեոգրության, թե՛ քաղաքական, իրավական, ազատասիրական մտքի ուղղվածությունը, թե՛ բարոյական ու էթնիկ հասկացությունների՝ ներքին մարդու կայացման հոգեբանական բարդ շերտերը, հայրենասերի բարձր որակների վարվեցողության պատկերը, թե՛ դպրասիրության

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 221-222 :  
<sup>2</sup> Նույն տեղում, էջ 223 :

ու նրա դրսևորումների շարժը, մեկիքությունների ներքին և արտաքին դիմումը, թե՛ հասարակական, քաղաքական կյանքն ուղղորդելու ճիշտ ընկալումը, հարաբերությունները կարգավորելու ճանապարհը:

Գրողն այդ օղակը ներկայացնում է մեկիքների հարաբերությունների բազմաշերտ դրսևորումներում, իշխանական հաստատուն կարգերում: Բաֆթու այս միտվածության մեջ ընդգծված ենք տեսնում գրողի՝ շարադրվելիք նյութի հանդեպ որոշակի մշակված կարգ-օրագիր՝ մեկիքությունների երկդարյա ինքիշխանությունը ներկայացնելի փաստի ու գեղարվեստի միաձուլյ կառույցում, որպես մի անբաժանելի մարմին իր դրսևորումներով՝ ֆիզիկական, հոգևոր, գեղագիտական, փիլիսոփայական-բարոյական, էթնիկ, հոգեբանական ներսուզումներով, ինչը կայացած ենք տեսնում «Խառնաձուլ մեկիքություններում»: Այդ գծի վրա արժանահիշատակ շատ փաստեր կարելի է թվարկել:

Մի փոքր անդրադարձ կատարենք վիպական ուրույն գծերով ներկայացված, եռանդոտ ու մեծ հայրենասեր Գյուլիստանի Մելիք Բեգլարյան մելիք Յուսուֆի՝ նույնպես դրվատական գծերով օժտված որդու՝ մելիք Բեգլար II-ի կյանքի մասին: Բաֆթին նրան ներկայացնում է իբրև սաստիկ գոռոզ, քաջասիրտ ու պատերազմասեր, անպարտելի երիտասարդ, ով դեռևս հոր կենդանության ժամանակ, նրա մղած կռիվներին մասնակցելով, հայտնի է դարձել իր զարմանալի հաղթանակներով: Մելիք Բեգլար II երկար չվարեց իր հայրենի իշխանությունը, քանի որ լեզգիների դեմ մղած ճակատամարտում՝ Գանձակից ոչ հեռու գտնվող Գորան գետի, նույնանուն գյուղի մոտ սպանվում է հրացանից արձակած գնդակից: Բաֆթին նրա առեղծվածային մահվան շուրջ հյուսված ավանդությունը «լեզենդա» է անվանում, նշելով նաև, թե մելիք Բեգլարի սպանության մեջ կար մի ամբողջ ժաման, այսինքն՝ վեպ:

Մոր՝ բարենիքու Հերիքնագի խնդրանքը, որ որդին այդ անգամ չգնա պատերազմի, քանի որ վատ երագ էր տեսել, մելիք Բեգլարը խստասրտորեն մերժում է՝ նրան մի կողմ քաշելով, թռչում է ձիու գավակին ու գնում իր ճակատագրի հետևից՝ այլևս չվերադառնալով: Բարդ ու հոգեկան ներաշխարհով հարուստ կերպար է մելիքի տիպը, քաջագնական հատկություններով, ներքին մարդու գծերով օժտված:

Մելիք Բեգլար II ամուսնացած էր Մելիք Ծահնագարի աղջկա՝ Ամարնայի (Մարիամի) հետ, ով իր հոր նման նպատակին հասնելու միջոցների մեջ խորություն չէր դնում: Մելիք Բեգլար II սիրում էր նաև շրջապատին իր գեղեցկությամբ հայտնի Բալային: Ամարնան խանդի հողի վրա որոշում է վրեժխնդիր լինել ամուսնուց եւ սպանել Բալային: Հրաշագեղ կինը ապրում էր Գյուլիստանի Խարխափուտ գյուղի մոտերքում գտնվող «Մելիք Բեգլարի այգի» կոչված գեղատեսիլ վայրերից մեկում: Ամարնան իրենց ծառաներից Լալային ուղարկում է ավտյանտիտուն սպանելու: Լալան որոշված եղևնագործությունը կատարում է հմտորեն՝ Բալայի երկար վարսերը փաթաթելով նրա պարանոցով՝ խնդրամահ է անում վերջինիս, մարմինը գցում հորի մեջ:

Եվ այն պահին, երբ մելիքը պատրաստվում է ձին նստել կռիվ գնալու, նրան հայտնում են, թե Բալան սպանված է. «Երբ կվերադառնամ պատերազմից, ես գիտեմ, թե ինչ կանեմ սպանողներին»,- գոչում է այլայլված մելիքը:

Ամարնան լավ էր ճանաչում ամուսնուն, նրա խստասրտությունը ու համոզված էր, որ ամեն կերպ ամուսնուն կհաջողվի պարզել սիրած կնոջ սպանության մանրամասները, գտնելով եղևնագործին՝ սրի կքաշի ո՛չ միայն սպանողին, այլև ամբողջ ընտանիքը:

Ամարնան վախից մղվում է ավելի մեծ հանցագործության: Զգեստափոխվելով ամուսնուն հետևում է իբրև նրա թիկնապահներից մեկը: Կռիվ թե՛՛ պահին, Ամարնան թփերի միջից արձակում է գնդակը եւ տապալում ամուսնուն՝ երբևէ պարտություն չկրած սիրած մարդուն՝ Գյուլիստանի քաջակորով մելիք Բեգլար II-ին:

Մելիքի որդին՝ Ֆրեյդունը, անչափահաս էր, դրա համար Գյուլիստանի կառավարությունը ստանձնեց մելիք Բեգլար II-ի եղբայրը, նույնպես քաջագործություններով հայտնի, քաջ պատերազմող, Մելիք Բեգլարյան Աբով III:

Բաֆթին, իր հերթին նույնպես իբրև մեծ հայրենասեր, իր հայրենիքի դառը ճակատագրի ժառանգորդ՝ գրում է. «Դրա (մելիք Աբով III- Զ. Բ.) կառավարության օրերում, որպես պիտի տեսնենք, կատարվեցան Ղարաբաղի բախտավոր և ամենադժբախտ անցքերը...»<sup>1</sup>, - ու ցավով, մեծ ափսոսանքով ավելացնում է. «Եվ այսպես, Գյուլիստանի Մելիք-Յուսուֆը մեռավ, նրա որդին՝ Մելիք-Բեգլարը սպանվեցավ. Տիգրակի Մելիք-Եսային Իբրահիմ-խանի խաբուխությանը զոհ դարձավ. Զրաբերդի Մելիք-Աթանը մեռավ: Նշանավոր փորձված մարդիկը անհետացան, մնացին դյուրագրգիռ, տաքարյուն երիտասարդները...»<sup>2</sup>:

Իբրահիմը՝ պարսից կրոնական մոլեռանդությունը որդեգրած հրեշտ, հնարավոր եւ անհնարին բոլոր միջոցները օգտագործում էր մելիքներին իրար դեմ լարելու, նրանց ուժերը ջլատելու, նրանց բարքերը ոտնահարելու, ազգային սովորություններն անբարոյականացնելու, քամահրելու, հայեցի դիմագիծը աղավաղելու, նրանց միաբանությունը քանդելու, հակառակ հոգևոր եւ աշխարհիկ պաշտոնավորներ ընտրելու, մելիքների որդիներին, ժառանգներին շանտաժի ենթարկելու կամ մահադեղով սպանելու, կրոնափոխելու՝ նրանց մղելով խստովանության:

Այս ամենը պատճառ հանադիսացան, որ Արցախի մելիքները երկու մասի՝ հակառակ կուսակցությունների բաժանվեցին, մեկը Մելիք Ծահնագարյանների կուսակցությունն էր, որին պատկանում էին խանին համակրողներն ու Երիզմանկան վանքի կաթոնիկոսները, մյուսը՝ մելիք Մեջլումի եւ Մելիք Բեգլարյանների, որոնք հակառակ էին Իբրահիմ խանին ու միացած էին Գանձասարի վանքի կաթողիկոսի հետ: Արցախի միաբան մելիքներին հավատարիմ ու բարեկամ Գանձակի Զավադ խանը համակրում էր մելիք Մեջլումի եւ մելիք Աբովի այն մտքին, որ չպետք է խաբեքա ու խարդախ Իբրահիմին հավատալ ու պետք է թե՛ նրա բույնը՝ Ծուշի բերդը, քանդել եւ թե՛ Իբրահիմին այդ որջից հեռացնել:

Վիպական գեղեցիկ հյուսվածք է Զավադ խանի հետևյալ խոսքը, որը կարելի է **աննծրի** ժանրի տակ ընդունել՝ իմաստասիրական համեմատության երանգ նախանշելով. «Սոզվալ լինի Մելիք-Ծահնագարը, որ կյանք տվեց սառած օձին (Փանահին- Զ. Բ.), իր կործրի վրա ջերմացնելով նրան: Եթե չլիներ Ծուշի բերդը, չէր լինի և ջուանշիրցիների խանությունը...»<sup>3</sup>:

Թիֆլիսի Հավաքար թաղամասի հայ կանանց շուրջերից լսվում էր հետևյալ **աննծրը** (ապատեղեկատվության հետևանք), կապված Ադա Մահմեդ խանի կողմից Թիֆլիսի գրավման, ավերման պատմությանը. խանի բանակում էր

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 225 :  
<sup>2</sup> Նույն տեղում էջ 225 :  
<sup>3</sup> Նույն տեղում էջ 252 :

գտնվում նաև մեծ հայրենասեր մելիք Ջուլշուղն ու իր զինակից բարեկամ Գանձակի Ջավադ խանը. մելիք Ջուլշուղին խանը խոստացել էր ձեռք չտալ հայերին, բայց այդպես էլ չէր կատարել տված խոստումը: Ահա այդ անեծքը.

Մելիք-Մեջլումը շուն դառնա,  
 Ջավադ-խանը պստիկ կուճի,  
 Մելիք-Մեջլումի ազգեմեն  
 Թող չմնա մեկը Շուշի<sup>1</sup>:

Րաֆֆին Փանահին համարում է ավելի աննշան ու ստոր, սարյուջալու ցեղից ծնված: Ավելի գորնդ ու նշանավոր ցեղերը՝ ջուանշիրցիք, քաբիրլուցիք արհամարանքով էին նայում Փանահի վրա: Մելիք Շահնագարն եղավ այն ուժը, որի միջոցով Փանահը իրեն ենթարկեցրեց վերողիտված ցեղերին, որոնք ունեին իրենց ուրույն նահապետական սովորություններն ու ավելի ազատ բարքերը:

Րաֆֆին Մելիք Շահնագարի կերպավորումը տիպական գծերով է ներկայացնում՝ ընդգծելով վերջինիս բացասական հատկությունները, բացասական ներկայությունը՝ Արցախի մելիքությունների հնքնավարության քայքայման գործում. «Եվ իրավ,- գրում է վիպասանը,- այդ բերդը (Շուշին- Ջ. Բ.) հիմնեց Մելիք-Շահնագարը և տվեց Փանահ- խանին: Նա Ղարաբաղի կործրքի վրա սկսեց զարգացնել մի նենգավոր, օձաբարո մահմեդական խանություն...»<sup>2</sup>:

Վերջին պարբերությունը **համեմատության** լավագույն օրինակ պետք է ընդունել:

**Ասույթի** օրինակ կարելի է համարել հետևյալ միտքը. «Հանգամանքների շնորհիվ նա (Իբրահիմը- Ջ. Բ.) իրավունք գտավ հայոց հողերի վրա, որը մինչև այնօր չուներ»<sup>3</sup> կամ հետևյալ պարբերությունը. «Հասարակության վրա տարածված բռնությունը այնքան զգալի չէ լինում անհատներին, մինչև իրանց անձի վրա դեռ չեն փորձել նրա ճնշող ներգործությունը»<sup>4</sup>:

Գրող Րաֆֆին «Նսամսայի մելիքությունները» շարադրելիս, վիպական հյուսվածքներ է դարձրել բանաստեղծությունը, ավանդությունը, լեզենդը, համեմատությունը, ասացվածքը, անեծքը, օրհնանքը, հակադրույթը, փոխաբերությունը, իմաստասիրությունը, ասույթը, նամականին եւ այլն<sup>5</sup> :

**Նամականու** հիանալի օրինակներ շատ կան. այդպիսիներից է Մելիք Բեգլարյան մելիք Աբովի՝ 1807թ. նոյեմբերի 23-ին գրած նամակը՝ ուղարկված Սանկտ Պետերբուրգ՝ Մինաս Լազարյանին, որում երևում են հայ մելիքի կատարած գործերը, ճակատագրի որոգայթները, եւ որը համարյա տիպական է մնացած հարազատ մելիքների կերպարների, նրանց գործունեության բնույթագրման համար: Պետրոս I կայսրի բարձրագույն հրովարտակի համաձայն վրաց Հերակլ թագավորը Բոլնիսի գավառը շնորհել է մելիք Աբովին, իսկ Լոռին՝ մելիք Ջուլշուղին:

**Նամականու** մի այլ հետաքրքիր նմուշ է մելիք Ջուլշուղի՝ 1806թ. դեկտեմբերի 2-ի գրած նամակը Սանկտ Պետերբուրգ՝ Մինաս Լազարյանին, ապա մելիքների նամակը (համանման բովանդակությամբ)՝ գրված նույն հասցեով<sup>6</sup>:

**Օգտագործված գրականություն**

Րաֆֆի, Խամսայի մելիքությունները, ԵԺ, տասը հատորով, տասներորդ հատոր Երեւան, Հայպետհրատ, 1959 :

<sup>1</sup> Նույն տեղում էջ 269 :  
<sup>2</sup> Նույն տեղում էջ 252 :  
<sup>3</sup> Նույն տեղում էջ 258 :  
<sup>4</sup> Նույն տեղում էջ 259 :  
<sup>5</sup> Տես նույն տեղում, էջ 206-210, 209, 252, 269, 305, 306:  
<sup>6</sup> Տես նույն տեղում, էջ 306-308 :